https://doi.org/10.46991/hc.2025.si1.080

The Development of Medieval Archaeology in Armenia and the "Vayots Dzor Silk Road Survey" (VDSRS) Project[1]

Astghik Babajanyan
https://orcid.org/0009-0000-2704-7085
NAS RA Institute of Archaeology and Ethnography, senior researcher, Ph.D
babajanyanastghik@yahoo.com

Kate Franklin
https://orcid.org/0000-0003-4954-0246
Birkbeck University of London, senior lecturer, Ph.D
k.franklin@bbk.ac.uk

Keywords - Medieval Archaeology, Cultural Landscape, Currrent problems and Challenges, "Silk Road", Vayots Dzor, VDSRS Project, Historical and Cultural Heritage Preservation, Interdisciplinary Approaches.

This article addresses the current challenges facing medieval archaeology and outlines the necessary steps to align it with global trends, ensuring its sustainable development. Key challenges include the need for methodological innovation and enhanced interdisciplinary collaboration, both of which are essential for a more comprehensive study of Armenia's medieval past.

The article emphasizes the importance of a comprehensive, interdisciplinary approach to archaeological research that goes beyond merely presenting excavated sites and artifacts. By synthesizing the results of excavated monuments and examining them in the context of the

[1] Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ «21T-6A056» ծածկագրով թեմայի շրջանակում:
History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 80-95.
Received: 12.11.2024
Revised: 04.12.2024
Accepted: 18.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

surrounding landscape, this approach facilitates the reconstruction of a complete and nuanced picture of medieval life.

In light of the issues and challenges identified for advancing medieval archaeology in Armenia, the VDSRS project prioritizes these objectives in its research agenda. The project's landscape approach integrates the study of archaeological sites, architectural monuments, historical and epigraphic sources, and material culture to gain insights into how people historically shaped and interacted with their environment.

Building on Armenia's rich tradition of medieval archaeology and incorporating new research findings, VDSRS aims to elevate Armenian archaeology within international academic discourse, fostering cross-cultural dialogue and situating Armenia within both regional and global medieval contexts. Through this approach, the project enhances our understanding of the significance of Armenia's medieval heritage within the broader framework of the region's history.

Միջնադարյան հնագիտության զարգացումը Հայաստանում և «Մետաքսի ճանապարհի հետազոտություն Վայոց ձորում» (VDSRS) նախագիծը

Աստղիկ Բաբաջանյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
ավագ գիտաշխատող, պ.գ.թ.

Քեյթ Ֆրանկլին
Լոնդոնի Բիրկբեկ համալսարանի ավագ դասախոս, մարդաբանության թեկնածու

Հիմնաբառեր - միջնադարյան հնագիտություն, մշակութային լանդշաֆտ, առկա հիմնախնդիրներ և մարտահրավերներ, «Մետաքսի ճանապարհ», Վայոց ձոր, VDSRS նախագիծ, պատմամշակութային ժառանգության պահպանում, միջգիտակարգային մոտեցումներ:

Սույն հոդվածն անդրադառնում է միջնադարյան հնագիտության առջև ծառացած ներկայիս մարտահրավերներին և այն համաշխարհային միտումներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ քայլերին՝ ապահովելով դրա կայուն առաջընթացը: Հիմնական մարտահրավերները ներառում են մեթոդաբանական

նորարարության և միջգիտակարգային ավելի սերտ համագործակցության անհրաժեշտությունը, որոնք էական նշանակություն ունեն Հայաստանի միջնադարյան անցյալի ավելի համապարփակ ուսումնասիրության համար:

Հոդվածում ընդգծվում է հնագիտական հետազոտությունների համալիր, միջառարկայական մոտեցման անհրաժեշտությունը, որը դուրս է գալիս պարզապես պեղված հնավայրերի ու գտածոների ուղղակի ներկայացումից: Պեղված հուշարձանների արդյունքների սինթեզումը և դրանց՝ շրջակա լանդշաֆտի համատեքստում քննությունը թույլ կտա վերակազմել միջնադարյան կյանքի ավելի ամբողջական և բազմակողմանի պատկերը:

Հաշվի առնելով Հայաստանի միջնադարյան հնագիտության առաջընթացի համար ուրվագծված խնդիրներն ու մարտահրավերները՝ VDSRS նախագիծը փորձում է առաջնահերթություն տալ և անդրադառնալ այդ ոլորտներին՝ որպես հետազոտության առանցքային ուղղություն: VDSRS-ի որդեգրած լանդշաֆտային մոտեցումը միավորում է հնավայրերի, ճարտարապետական հուշարձանների, մատենագիր և վիմագիր աղբյուրների և նյութական մշակույթի վերաբերյալ հետազոտությունները՝ հասկանալու, թե ինչպես են մարդիկ պատմականորեն ձևավորել իրենց միջավայրը:

Հիմնվելով Հայաստանի միջնադարյան հնագիտության երկարամյա ավանդույթի վրա և ընդգրկելով նոր հետազոտությունների արդյունքները՝ VDSRS-ը ձգտում է բարձրացնել հայկական միջնադարյան հնագիտությունը միջազգային ակադեմիական հարթակներում՝ խթանելով միջմշակութային երկխոսությունը և Հայաստանը տեղավորելով տարածաշրջանային և համաշխարհային միջնադարյան լանդշաֆտում: Այս մոտեցման միջոցով նախագիծը նպաստում է Հայաստանի միջնադարյան ժառանգության նշանակության ավելի համապարփակ ըմբռնմանը տարածաշրջանի պատմության մեջ:

Развитие средневековой археологии в Армении и проект «Исследование Шелкового пути в Вайоц Дзоре» (VDSRS)

Астхик Бабаджанян
НАН РА, Институт археологии и этнографии, старший научный сотрудник, к.и.н.

Кейт Франклин
Биркбек, Университет Лондона, старший преподователь кандидат антропологии

Ключевые слова - средневековая археология, культурный ландшафт, текущие проблемы и вызовы, «Шелковый путь», Вайоц

Дзор, проект VDSRS, сохранение историко-культурного наследия, междисциплинарные подходы.

В этой статье рассматриваются текущие проблемы, с которыми сталкивается средневековая археология, и описывает необходимые шаги для ее согласования с глобальными тенденциями, обеспечивая ее устойчивое развитие. Ключевыми проблемами являются необходимость методологических инноваций и углубленного междисциплинарного сотрудничества, которые имеют решающее значение для более полного изучения средневекового прошлого Армении.

В статье подчеркивается важность комплексного, междисциплинарного подхода к археологическим исследованиям, который выходит за рамки простого представления раскопанных объектов и артефактов. Синтез результатов раскопанных памятников и их рассматрение в контексте окружающей среды, позволяет реконструировать более полное и многослойное представление о средневековой жизни.

Учитывая выявленные проблемы и вызовы для продвижения средневековой археологии в Армении, проект VDSRS ставит приоритетом эти цели в своей направлении исследований. Ландшафтный подход проекта объединяет изучение археологических объектов, архитектурных памятников, исторических и эпиграфических источников и материальной культуры для получения представлений о том, как люди исторически формировали и взаимодействовали со своей средой.

Основываясь на многолетней традиции средневековой археологии Армении и интегрируя новые результаты исследований, VDSRS стремится поднять армянскую средневековую археологию в международном академическом дискурсе, способствуя межкультурному диалогу и позиционированию Армении как в региональном, так и в глобальном средневековом контексте. Этот подход усиливает наше понимание значимости средневекового наследия Армении в более широком контексте истории региона.

* * *

Մուտք: Հայաստանի միջնադարյան հնագիտության և, առհասարակ, Հայաստանի հնագիտության ուսումնասիրության հիմքերը դրվել են դեռևս XIX դարավերջին, երբ Նիկողայոս Մառի ղեկավարությամբ մեկնարկեցին Անի քաղաքի հնագիտական պեղումները: XX դարում Հայաստանի միջնադարյան հնագիտությունը մեծ մասամբ կենտրոնացած էր Դվին քաղաքի պեղումների վրա, որոնց շնորհիվ բացահայտվեցին Հայաստանի միջնադարյան քաղաքաշինությունը, արհեստները, նյութական մշակույթը: Միջնադարի պատմության վերաբերյալ տվյալները շարունակաբար լրացվեցին նաև

վանքերի, եկեղեցիների և ամրոցների պեղումներով, որոնք ավելի լայն պատկերացում էին տալիս միջնադարյան ճարտարապետության և հոգևոր ու մշակութային կյանքի տարբեր ոլորտների մասին:

Հայաստանի միջնադարյան հնագիտական ժառանգության ուսումնասիրությունը ներկայումս կարևոր նշանակություն ունի միջնադարյան շրջանի պատմությունը ավելի համակողմանի հասկանալու, նաև պատմամշակութային ժառանգության վայրերը պահպանելու և կառավարելու համար:

Թեև միջնադարյան հնագիտության զարգացումը ներկայացվել է մի քանի հրապարակումներում [տե՛ս Քալանթարյան, Մելքոնյան, 2005, 101-123; Melkonyan, 2020], սակայն դրանք հիմնականում ուղղված են եղել համառոտ ամփոփելու պեղված և ուսումնասիրված հնավայրերն ու դրանց հետազոտությունների արդյունքները:

Սույն հոդվածի նպատակն է առաջ քաշել ներկայումս միջնադարյան հնագիտության առջև կանգնած որոշ խնդիրներ ու մարտահրավերներ, որոնց լուծումը նախադրյալներ կստեղծի ոլորտը համաշխարհային միտումներին համապատասխանեցնելու և դրա շարունակական զարգացումն ապահովելու համար: Այդ մարտահրավերները ներառում են ինչպես մեթոդական նորարարություն, այնպես էլ անցում միջգիտակարգային ավելի սերտ համագործակցության: Այդ խնդիրների լուծումը ոչ միայն կխթանի Հայաստանի միջնադարյան անցյալի ավելի համապարփակ քննությունը, այլև Հայաստանի միջնադարյան հնագիտությունը կընդգրկի համաշխարհային միջնադարյան ուսումնասիրությունների համատեքստում՝ հարստացնելով պատմական լանդշաֆտների և հասարակությունների մասին ընդհանուր պատկերացումները:

Հայաստանի միջնադարյան հնագիտության առաջընթացի նոր մոտեցում է առաջարկում «Մետաքսի ճանապարհի հետազոտություն Վայոց ձորում» (այսուհետ՝ VDSRS) նախագիծը, որը հիմնվում է ամբողջական մշակութային լանդշաֆտի ուսումնասիրության վրա՝ չսահմանափակվելով առանձին հնավայրերի քննությամբ: Սա հնարավորություն է տալիս ոչ միայն ընդլայնել մեր պատկերացումները Վայոց ձորի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերի մասին, այլև ճանապարհ է հարթում այլ տարածաշրջանների մշակութային լանդշաֆտների հետագա ուսումնասիրության համար՝ Հայաստանը դնելով ավելի լայն տարածաշրջանային համատեքստում: VDSRS-ի մոտեցման առանցքը «Մետաքսի ճանապարհի» մշակույթն է, որը կապող օղակ է տարբեր տարածաշրջաններում ապրող տարբեր ժողովուրդների ու համայնքների միջև՝ խթանելով մշակութային փոխանակումն ու փոխգործակցությունը: Այս կապերի բացահայտումից բացի՝ VDSRS-ը փորձում է դաշտ ստեղծել դարերի ընթացքում մշակութային լանդշաֆտների և մարդ-միջավայր փոխազդեցությունների ուսումնասիրման համար:

Միջնադարյան հնագիտության առկա խնդիրները և մարտահրավերները:

- *Ուսումնասիրություններն իրականացվում են ճարտարապետական հուշարձանների վերականգնման նպատակով կատարվող պեղումների համատեքստում:*

Ներկայումս պետական և մասնավոր միջոցներով պեղումները շարունակվում են միջնադարյան նորանոր հնավայրերում, որոնց հիմնական նպատակը ճարտարապետական հուշարձանների վերականգնումն է: 2000-ական թթ. հետո միջնադարյան հնագիտությունը կենտրոնացած է մեծ մասամբ վերականգնվող հուշարձանների՝ հատկապես վանական համալիրների, եկեղեցիների ու մատուռների պեղումների վրա՝ պատմական, աղբյուրագիտական հենք ապահովելու (մասնավորապես՝ նորահայտ վիմագրեր), նաև ճարտարապետական հորինվածքն ամբողջացնելու համար բացակայող մանրամասներ հայտնաբերելու համար (հմմտ. օրինակ՝ Տանձափարախի անապատի [Նալբանդյան Ս., Նալբանդյան Ա., Բաղալյան, Ալեքսանյան, 2021], Մեղրիի Ս. Հովհաննես [Նալբանդյան, 2019ա], Հավուց թառ [Նալբանդյան, 2017-1018; Նալբանդյան, 2019բ], Ս. Գրիգոր Բարձրաքաշ [Նալբանդյան, 2022], վանական համալիրները և այլն): Այնուամենայնիվ, այդ պեղումները լույս են սփռում միջնադարյան անցյալի վրա և հնարավորություն են տալիս դրվագներ լրացնել Հայաստանի միջնադարյան պատմության համայնապատկերում:

- *Պեղվող հուշարձանների արդյունքների սինթեզի անհրաժեշտություն:*

Միջնադարյան հնագիտության հենքը մինչ այսօր էլ Դվինի և Անիի պեղումների արդյունքներն են, որոնք ուսումնասիրվել են քաղաքաշինության, արհեստների և նյութական մշակույթի առումով, սակայն նորանոր պեղվող հնավայրերը, հայտնաբերված գտածոները նոր տվյալներ են տալիս տեղական առանձնահատկությունների, կենտրոնական և ծայրամասային գավառների միջև մշակութային և նյութական կապերի վերաբերյալ: Այդ բացահայտումները լույս են սփռում միջնադարյան կյանքի տարբեր կողմերի վրա՝ անհրաժեշտություն առաջացնելով այդ փոխազդեցությունների և տարածաշրջանային առանձնահատկությունների ավելի խորը ուսումնասիրության համար: Սակայն ներկա ուսումնասիրությունների շրջանակը սահմանափակվում է հիմնականում պեղումների արդյունքների հրատարակությամբ, և այդ տվյալների սինթեզման և համախմբման համար անհրաժեշտ են ընդհանրացնող հետազոտություններ:

- *Միջնադարյան առօրյա կյանքը իր բազմաբնույթ կողմերով ներկայացնելու անհրաժեշտություն, որը կներառի.*

ա. միջնադարյան գյուղերի ուսումնասիրություն: Բացառապես արքայական կամ իշխանական վայրերի, և/կամ պաշտամունքային հուշարձանների վրա կենտրոնանալը բավարար չէ միջնադարյան կյանքի ողջ բազմազանությունը հասկանալու համար:

Գյուղական բնակչության գործունեությունը, առօրյա կյանքը, շրջակա միջավայրի հետ փոխգործակցությունը և նրանց դերն ավելի լայն քաղաքական և մշակութային համակարգում վճռորոշ են միջնադարյան հասարակության ավելի ամբողջական պատկերը վերարտադրելու համար: Առանց գյուղերն ուսումնասիրելու՝ մենք վտանգում ենք անտեսել կյանքի այն կառուցվածքը, որը փոխազդում էր *ուրբան* և *էլիտար* կենտրոնների հետ:

Ներկայումս նպատակային և համակարգված պեղվել է միջնադարյան միայն երկու գյուղատեղ. Ամբրոյի գյուղատեղը՝ Արայի գյուղում, և Արփա գյուղատեղը՝ Արենի գյուղում (տե՛ս Franklin, Vorderstrasse, Babayan, 2017; Babajanyan, Franklin, 2018), սակայն բնակավայրերի այդ տեսակի մասին տվյալների ընդլայնումը թույլ կտա ավելի խորը ուսումնասիրել այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են դրանց ձևավորման և բնակեցման առանձնահատկությունները, ժողովրդական ճարտարապետությունը, գյուղատնտեսական պրակտիկաները և առօրյա կյանքը: Հաշվի առնելով առկա պեղումների արդյունքների սահմանափակ շրջանակը՝ հետագա հետազոտությունները պետք է ուղղված լինեն աշխարհագրական տարբեր շրջաններում միջնադարյան գյուղական բնակավայրերի համալիր ուսումնասիրությանը:

բ. Առօրյա կյանքի ավելի համապարփակ հետազոտությունների անհրաժեշտություն, որը չի սահմանափակվի միայն բացված կառույցները և նյութական գտածոները ներկայացնելով, այլ կներառի հնագիտական միջգիտակարգային մոտեցումների համակցում, այդ թվում՝ հնաբուսաբանական և կենդանաբանական տվյալները, որոնք կարող են լույս սփռել միջնադարյան սննդակարգի և կենսապահովման համակարգի վրա:

- *հնագիտական հուշարձանի ուսումնասիրություն ոչ միայն իր տարածքում, այլ նաև այն շրջապատող լանդշաֆտում:*

Հնագիտական հուշարձանների քննության զուգադրումը իրենց շրջակա միջավայրի ընդհանուր հետազոտության հետ թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես են այդ վայրերը փոխազդել իրենց միջավայրի և ավելի լայն հասարակական-քաղաքական և տնտեսական համակարգի հետ, որոնցում նրանք գոյություն են ունեցել: Միջնադարյան կյանքի մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է որդեգրել լանդշաֆտային հնագիտության մոտեցման վրա հիմնված մեթոդը՝ ուսումնասիրելով բնակավայրերի, ճանապարհների, մշակվող հողերի և բնական ռեսուրսների տարածական բաշխումը՝ հասկանալու, թե ինչպես են մարդիկ հարմարվել իրենց միջավայրին և ինչպես են լանդշաֆտներն ազդել հասարակական կառուցվածքի և մշակութային գործունեության վրա:

- *Քրիստոնեական թաղումների/գերեզմանների համալիր ուսումնասիրություն:*

XX դարի վերջին քառորդում և XXI դարում պեղվող հուշարձանների ճնշող մեծամասնությունը պաշտամունքային համալիրներն է եղել, և առկա մարտահրավերների

թվում է նաև դրանց շուրջ քրիստոնեական գերեզմանների ուսումնասիրությունը, որը մինչ այդ դիպվածային բնույթ էր կրում: Ներկայումս, միայն Երերույքի և Չիչխանավանքի շուրջ տարածվող գերեզմաններն են նպատակային պեղվել, որի շնորհիվ ի հայտ եկած մարդաբանական տվյալները քրիստոնեական թաղումների վերաբերյալ ոչ միայն լուծումներ են տալիս այդ ոլորտում առկա խնդիրներին, այլև նոր հարցեր են առաջացնում, և դրանց լուծումը պահանջում է շարունակական և համակարգված հետազոտություն [տե՛ս Տոնապետյան, 2020; Նալբանդյան, Ալեքսանյան, Միրիջանյան, 2015; Միրիջանյան, 2021]:

- *Միջնադարյան Հայաստանի հնագիտական հետազոտությունների միջազգայնացում:*

Չնայած նրան, որ այժմ միջնադարյան հուշարձաններն ավելի մեծ թափով ու ծավալով են պեղվում, այնուամենայնիվ, ներկա ուսումնասիրությունների շրջանակը դեռևս մնում է տեղական և «փակ» Հայաստանի սահմաններից դուրս:

VDSRS նախագիծը. նպատակները, մեթոդները և ընթացիկ արդյունքները: Հաշվի առնելով Հայաստանի միջնադարյան հնագիտության առաջընթացի համար ուրվագծված խնդիրներն ու մարտահրավերները՝ 2015 թ. ստեղծվեց VDSRS նախագիծը, որն առաջնահերթություն է տալիս և անդրադառնում այդ ոլորտներին՝ որպես հետազոտության առանցքային ուղղություն: VDSRS-ը փորձում է Հայաստանի միջնադարյան անցյալի ուսումնասիրությունները տանել նաև միջազգային լայն հարթակ, որը ներառում է Հայաստանի հնագիտական տվյալների ինտեգրումը ավելի լայն ակադեմիական քննարկումներում:

Միջնադարյան մշակութային լանդշաֆտի ձևավորման գործում Մետաքսի ճանապարհների քաղաքական և սոցիալ-մշակութային դերի ուսումնասիրման համար թիրախային կամ ելակետային տարածքը Վայոց ձորի միջնադարյան հնագիտական լանդշաֆտն է՝ մասնավորապես, Վայոց ձորում ստեղծված ճանապարհների և ենթակառուցվածքների համակարգը (ներառյալ բնակավայրեր, ամրոցներ, պաշտամունքային հուշարձաններ, քարավանատներ և կամուրջներ, արտադրական և այլ համալիրներ), որը հնագիտական լանդշաֆտի ձևավորման կարևորագույն բաղկացուցիչներից է (Նկ. 1-2): Այս հետազոտությունն ընդգրկում է Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական կյանքի բազմաբևեռ ոլորտները զարգացած և ուշմիջնադարյան ժամանակաշրջանում՝ հատուկ ուշադրություն դարձնելով «Մետաքսի ճանապարհի» ազդեցությանը [մանրամասն տե՛ս Franklin, Babajanyan, 2018a; Franklin, Babajanyan, 2018b; Babajanyan, Franklin, 2021]:

Ընդգծելով համակողմանի ուսումնասիրության կարևորությունը՝ VDSRS-ը հիմնվում է Հայաստանի միջնադարյան հնագիտության ուսումնասիրման երկարատև

ավանդույթների վրա՝ ներառելով հնագիտական նոր հետազոտությունների ու պեղումների արդյունքները, որոնք հնարավորություն են տալիս վերանայել վայոցձորյան հնագիտական լանդշաֆտը և նյութական մշակույթի ուսումնասիրության միջոցով բացահայտել միջնադարյան տեղական կյանքի օրինաչափություններն ու Մետաքսի ճանապարհային մշակույթով ստեղծված փոխառնչությունները:

VDSRS նախագիծը, առաջնորդվելով լանդշաֆտային հնագիտական մոտեցմամբ, կիրառում է մի շարք մեթոդներ, որոնք օգնում են բացահայտել և մեկնաբանել Վայոց ձորի միջնադարյան մշակութային լանդշաֆտը [մանրամասն տե՛ս Franklin, Babajanyan, 2018a]: VDSRS-ի մոտեցման հիմքում, առաջին հերթին, ընկած են տեղանքի զննությունը և քարտեզագրումը, որոնց միջոցով փաստագրում և վերլուծում ենք գավառի՝ լեռնային և հովտային հատվածներում տեղակայված հնավայրերի միջև տարածական և մշակութային կապերը: Քարտեզագրման այդ գործընթացը օգնում է մեզ հասկանալ բնակավայրերի, առևտրային ուղիների և հանգույցների փոխկապակցվածությունը՝ թույլ տալով պատկերացնել, թե ինչպես են կազմակերպվում համայնքները և փոխգործակցում միմյանց հետ (Նկ. 3): Քարտեզագրումը ուղեկցվում է տվյալների թվային շտեմարանով, որը պարունակում է բոլոր հնավայրերի ճշգրիտ կոորդինատները և հակիրճ նկարագրությունները (Franklin, Babajanyan, forthcoming): Կազմվել է նաև տեղազննությունների շնորհիվ ի հայտ եկած հինգ տասնյակից ավելի վիմագրերի շտեմարան, որոնց արձանագրությունները դեռևս հրատարակված չեն:

Մյուս հիմնական մեթոդը նպատակային պեղումն է: Կենտրոնանալով Արփա գյուղատեղի պեղումների վրա՝ VDSRS-ը փորձում է բացահայտել նյութական մշակույթը և ճարտարապետական մնացորդները, որոնք արժեքավոր պատկերացումներ են տալիս բնակավայրի ձևավորման, պատմության և միջնադարյան բնակիչների առօրյա կյանքի վերաբերյալ (Նկ. 4-5): 2016 և 2023 թվականներին իրականացրած պեղումների շնորհիվ բացահայտվեցին Արփա գյուղատեղի վերաբերյալ մասնավոր տվյալներ, ինչպես օրինակ՝ շերտագրությունը, ժամանակագրությունը, Տարսայիճ Օրբելյանի և/կամ այլ իշխանական տների՝ Աղթամարյանների, Մահևանյանների ներկայության մասին նյութական մնացորդները, որոնց վերաբերյալ հիշատակություններ են պահպանվել պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկի մեջ [Օրբէլեան 1910, 367-368, 429-430]: Բացի այդ, պեղումները նպաստել են Վայոց ձորի նյութական մշակույթի և միջնադարյան գյուղական բնակավայրերի առանձնահատկությունների ավելի լայն ընկալմանը [Babajanyan, Franklin, 2018; Բաբաջանյան, Ֆրանկլին, 2021]:

Պակաս կարևոր չեն նաև հուշարձանի պահպանությանն ուղղված միջոցառումները: Ի պատասխան հնավայրի տարածքում ներխուժող ժամանակակից թաղումների հետևանքով ոչնչացման աճող ռիսկի՝ պեղումները հանգեցրեցին վճռական քայլի՝

հնավայրի տարածքում Արենի գյուղի ժամանակակից գերեզմանատան փակմանը և առանձին վայրում նոր գերեզմանատան համար տարածք հատկացնելուն:

VDSRS-ը կարևորում է գրավոր և արխիվային աղբյուրների վերլուծությունը, որը լրացնում է իրեղեն ապացույցները պատմական վկայություններով: Ուսումնասիրելով այդ աղբյուրները՝ մենք հնագիտական գտածոները քննում ենք պատմական համատեքստում՝ դրանք կապելով հայտնի իրադարձությունների, գործիչների և հասարակական զարգացումների հետ:

Վերջապես, հնագիտական գտածոների համապարփակ քննությունը մեր մեթոդաբանության զգալի մասն է կազմում: Սա ներառում է ոչ միայն մեր պեղումների և տեղազննության շնորհիվ հավաքված վերգետնյա գտածոները, այլև Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում պահվող միջնադարյան հարուստ հավաքածուն՝ Վայոց ձորի միջնադարյան նյութական մշակույթն ամբողջությամբ մեկնաբանելու համար:

VDSRS-ի նպատակներից մեկը, դուրս գալով զուտ գիտական բնույթից, ուղղված է կիրառելիությանը՝ բացահայտելով ռազմավարական ներդրումային առաջնահերթությունները Վայոց ձորի զբոսաշրջային ուղղությունների զարգացման համար, դրանով իսկ աջակցելով նրա մշակութային ժառանգության պատասխանատու կառավարմանն ու պահպանմանը:

VDSRS-ի հետազոտությունների ապագա ուղղությունները: VDSRS-ի աշխատանքները շարունակական զարգացող հետազոտություններ են, որոնք թեև զգալիորեն հարստացրել են Վայոց ձորի մշակութային լանդշաֆտի վերաբերյալ մեր պատկերացումները, սակայն դեռևս հեռու են սպառիչ կամ ամբողջական լինելուց: Մեր հետազոտական աշխատանքներին զուգընթաց՝ յուրաքանչյուր փուլում ի հայտ են գալիս նոր բացեր և հարցեր, որոնք բնականաբար ձևավորում են մեր ուսումնասիրությունների հաջորդ քայլերը և ուղղորդում մեր հետազոտությունների ապագա ուղղությունը:

Առաջ շարժվելով՝ մենք նպատակ ունենք խորացնել մեր պատկերացումները բնակավայրերի և ամրոցների միջև կապերի, վանական տնտեսությունների կառուցվածքի և քաղաքական ու կրոնական հաստատությունների կողմից ռեսուրսների կառավարման և համայնքային կյանքի վրա ազդելու ուղիների մասին:

Մշակութային լանդշաֆտի ուսումնասիրությունն ամբողջական չի լինի առանց շրջակա միջավայրի հետազոտությունների ներառման, որը թույլ կտա ավելի հստակ պատկերացում կազմել, թե ինչպես են Վայոց ձորի միջնադարյան հասարակությունները հարմարվել և փոփոխել իրենց լանդշաֆտները:

Մեր ուշադրության կենտրոնում կլինի նաև մշակութային լանդշաֆտի մասին հիշողության ուսումնասիրումը: Տեղազննությունների ընթացքում մենք քարտեզագրել ենք բազմաթիվ հնավայրեր, որոնք գրեթե ամբողջությամբ ոչնչացվել են XIX-XX դդ.

վերաբնակեցումների կամ հողի բարելավման (մելիորացիայի) հետևանքով: Չնայած դրան՝ տեղում վերգետնյա նյութի առատությունը և հիշողությունը այդ վայրերի վերաբերյալ պահպանվում է՝ կառուցված նոր մատուռների կամ կանգնեցված խաչքարերի և/կամ տապանաքարերի միջոցով (Նկ. 6): Դրանք օգնում են մեզ հասկանալ, թե ինչպես են համայնքները կապ պահպանում իրենց պատմական լանդշաֆտների հետ, նույնիսկ երբ այդ լանդշաֆտները փոխակերպվում են: Մյուս կողմից, կորսված հուշարձանների վերաբերյալ հիշողությունը պահպանվում է ավագ սերունդների պատմություններում: Այդ բանավոր պատմությունների արձանագրումը մեր ապագա աշխատանքների էական մասը կլինի, որը կօգնի մեզ ավելի լավ հասկանալ տարածաշրջանի անցյալը և ընդգծել այդ վայրերի մշակութային նշանակությունը համայնքի համար:

VDSRS նախագիծն, այսպիսով, հնարավորություն է ստեղծում ավելի համապարփակ պատկերացում կազմել Վայոց ձորի միջնադարյան կյանքի վերաբերյալ՝ ուսումնասիրելով մշակութային լանդշաֆտը, դրա առանձին բաղկացուցիչները, ենթակառուցվածքները և մարդկանց և շրջակա միջավայրի միջև հարաբերությունները: Մեր հետազոտությունն ընդգծում է Վայոց ձորի կարևորությունը միջնադարյան Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում և նպատակ ունի հստակորեն տեղակայել Հայաստանի դերը Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի XII-XV դդ. պատմության համատեքստում, ինչպես նաև նպաստել Հայաստանի միջնադարյան պատմության վերաբերյալ գիտելիքների զարգացմանը և փոխանցմանը:



Նկար 1. «Մետաքսի ճանապարհի» կարևոր հանգույցները. կարմիրով նշված է VDSRS-ի հետազոտության տարածքը (կազմող՝ Ք. Ֆրանկլին)



Նկար 2. Միջնադարյան Դվին-Պարտավ ճանապարհը՝ ըստ Հ. Մանանդյանի (1954) և Վ. Հարությունյանի (1960)



Նկար 3. VDSRS-ի փաստագրած հնավայրերը (կազմող՝ Ք. Ֆրանկլին)

Նկար 4. 2023 թ. պեղված հատվածի ընդհանուր տեսքը հարավից՝ ցուցադրելով շինարարական փուլերը (լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)

Նկար 5. Մանրամասներ 2023 թ. պեղված հատվածից (լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)

Նկար 6. Կանգնեցված խաչքար «Յավար» կոչվող մելիորացված տարածքում, ուր փաստագրվել է վերգետնյա միջնադարյան նյութի առատություն (լուսանկարը՝ Ք. Ֆրանկլինի)

Գրականության ցանկ

Babajanyan, Franklin 2019- Babajanyan A., Franklin K'., Mijnadaryan mshakut'ayin landshafty Vayots' dzorum Metak'si chanaparhi hamakargum, Hnagitut'yan yev azgagrut'yan instituti Ashkhatut'yunner, N 3, 2019, ej 125-136, 238-240: **(in Armenian)**

Babajanyan, Franklin 2021- Babajanyan A., Franklin K'., Mijnadaryan Arp'an, k'aravanayin chanaparhneri khach'merukin, khmb., Dalalyan T., Vayots' dzor: patmamshakut'ayin zharrangut'yan drvagner, Yerevan, «Hnagitut'yan yev azgagrut'yan institut» hrat., 2021, ej 231-249: **(in Armenian)**

Harut'yunyan 1960- Harut'yunyan V., Mijnadaryan Hayastani k'aravanatnern u kamurjnery, Yerevan, «Haypethrat», 1960, 147 ej. **(in Armenian)**

Mirijanyan 2021- Mirijanyan D., Hayastani mijnadaryan t'aghman karruyts'neri peghumnery (ants'yaly yev nerkan), Banber Matenadarani, N 31, 2021, ej 182-196: **(in Armenian)**

Nalbandyan 2017-2018- Nalbandyan A., Havuts' t'arri Blri yekeghets'in, «Hushardzan», N ZHB-ZHG, 2017-2018, ej 75-108. **(in Armenian)**

Nalbandyan 2019a- Nalbandyan A., Ardzanagir khach'k'arer Meghrii Sb Hovhannes (Anapastanats') vank'its', Lraber hasarakakan gitut'yunneri, N2, 2019, ej 272-287: **(in Armenian)**

Nalbandyan 2019b- Nalbandyan A., Norahayt vimagrer Havuts' t'arrits', «Hushardzan», N ZHD, 2019, ej 26-53. **(in Armenian)**

Nalbandyan 2022- Nalbandyan A., Bardzrak'ashi vanakan hamaliri 2021 t'. peghumneri ardyunk'nery, Hnagitakan hashvetvut'yun, 2022, 173 ej. **(in Armenian)**

Nalbandyan, Alek'sanyan, Mirijanyan 2015- Nalbandyan A., Alek'sanyan T., Mirijanyan D., Ch'ich'khanavank', Yerevan, «Gasprint» hrat., 2015, 87 ej. **(in Armenian)**

Nalbandyan S. Nalbandyan A., Badalyan, Alek'sanyan 2021- Nalbandyan S., Nalbandyan A., Badalyan H., Alek'sanyan T., Tandzap'arakhi anapati 2012-2019 t't'. peghumneri ardyunk'nery, «Hushardzan», N ZHZ, 2021, ej 85-119: **(in Armenian)**

Tonapetyan 2020- Tonapetyan P., Yereruyk'. K'ristoneakan Hayastani nshanavor hnavayr, Yerevan, «Sargis Khach'ents'. P'rint'info» hrat., 2020, 204 ej. **(in Armenian)**

K'alant'aryan, Melk'vonyan 2005- K'alant'aryan A., Melk'vonyan H., Hnagitakan ashkhatank'nery Hayastanum 1990-2003 t't'., Yerevan, «Mughni» hrat., 2005, 150 ej. **(in Armenian)**

Orbelean 1910- Patmut'iwn nahangin Sisakan arareal Step'anosi Orbelean ark'episkoposi Siwneats', T'iflis, «Yelek'trasharzh tp. Or. N. Aghaneants'i», 1910, 617 ej: **(in Armenian)**

Manandyan 1954- Manandyan A. O torgovle i gorodakh Armenii v svyazi s mirovoy torgovley drevnikh vremen (V v. do n. e. – XV v. n. e.), Yerevan, Izd. YEGU, 1954, 346 s. **(in Russian)**

Babajanyan, Franklin 2018- Babajanyan A., Franklin K., Everyday Life on the Medieval Silk Road: VDSRS Excavations at Arpa, Armenia, Aramazd, N 12/1, 2018, pp. 154-182.

Babajanyan, Franklin 2021- Babajanyan A., Franklin K., Local Canyons, Global Views: Results of the Vayots Dzor Silk Road Survey (VDSRS) Project Based on the 2015-2019 Seasons, In Avetisyan P., Bobokhyan A. (eds), Archaeology of Armenia in Regional Context, Yerevan, IAE publishing, 2021, pp. 396-412.

Franklin, Babajanyan 2018a- Franklin K., Babajanyan A., Approaching Landscapes of Infrastructure: Methods and Results of the Vayots Dzor Silk Road Survey, In Anderson W. et al. (eds), Landscape Archaeology in Southern Caucasia: Finding Common Ground in Diverse Environments. Vienna: Austrian Academy of Sciences, Institute for Oriental and European Archaeology (OREA) series 8, 2018, pp. 131-143.

Franklin, Babajanyan 2018b- Franklin K., Babajanyan A., The Power of Making Places: Collaborative Heritage and Working with ARISC in Armenia, Journal of Eastern Mediterranean Archaeology and Heritage Studies, N 6/3, 2018, pp. 205-216.

Franklin, Vorderstrasse, Babayan 2017- Franklin K., Vorderstrasse T., Babayan F., Examining the Late Medieval Village from the Case at Ambroyi, Armenia, Journal of Near Eastern Studies, N 76, 2017, pp. 113–138. https://doi.org/10.1086/690559

Franklin, Babajanyan (forthcoming)- Franklin K., Babajanyan A. Textual layering as landscape formation process: Interdisciplinary methodology and medieval places in Vayots Dzor, Armenia, European Journal of Archaeology.

Melkonyan 2020- Melkonyan H., The Achievement of Medieval Archaeology in the Past Fifty Years, Aramazd, N 10/1-2, 2020 (2016), pp. 372-399.